# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 24/1551 «24» 06 2016 թ.

Ձեր 2/3236-16 27.06.16թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՑ ԹԻՎ Ա-188
«27» 06 2016 թ.

*Հայաստանի Հանրապետության*
*մարդու իրավունքների պաշտպան*
*պարոն Ա.ԹԱԹՈՅԱՆ*

*Հարգելի պարոն Թաթոյան*

Ձեր կարծիքին են ուղարկվում ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության եզրակացության հիման վրա լրամշակված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Առդիր՝ «4» թերթ:

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

*Իրավաբանական վարչություն*
*կատարող՝ Ս.Աբրահամյան*
*հեռ՝ 59-60-91*

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀՈԴՎԱԾ 1.** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի Քրեական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք)՝ 266-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն գլխի իմաստով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի չափ է համարվում անսովոր օգտագործողի, այսինքն՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող նյութեր երբևէ չօգտագործած անձի օրգանիզմի վրա միջին հոգեներգործուն ազդեցություն թողնելու համար որպես կանոն բավարար թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի նվազագույն չափը:».

2) 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին, 5.2-րդ և 5.3-րդ, 5.4-րդ և 5.5-րդ մասեր.

«5.1. Սույն գլխի իմաստով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի խոշոր չափեր են համարվում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի չափի 20-ապատիկից մինչև 200-ապատիկը կազմող չափերը:

5.2. Սույն գլխի իմաստով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի առանձնապես խոշոր չափեր են համարվում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի չափի 200-ապատիկը գերազանցող չափերը:

5.3. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 5-րդ մասում ամրագրված չափորոշիչը:

5.4. Սույն գլխի իմաստով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափեր են համարվում այն նվազագույն չափերը, որոնք անհրաժեշտ են համապատասխանաբար խոշոր կամ առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պատրաստելու համար:

5.5. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 5.4-րդ մասով ամրագրված չափորոշիչը:».

3) 7-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

**ՀՈԴՎԱԾ 2.** Օրենսգրքի 273-րդ հոդվածի՝

1) վերնագրում և 1-ին մասում «թմրանյութեր» բառերը փոխարինել «թմրամիջոցներ» բառով.

2) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ և 4-րդ մասեր.

«3. Սույն գլխի իմաստով մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի խոշոր չափեր են համարվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի զգալի չափերի 10-ապատիկից մինչև 20-ապատիկը կազմող չափերը:

4. Սույն գլխի իմաստով մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի առանձնապես խոշոր չափեր են համարվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի զգալի չափերի 20-ապատիկը գերազանցող չափերը:»:

**ՀՈԴՎԱԾ 3.** Օրենսգրքի 275-րդ հոդվածի՝

1) 2.2-րդ մասի 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

2) 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1 -րդ մաս.

«3.1. Սույն գլխի իմաստով խիստ ներգործող նյութերի խոշոր չափ է համարվում անսովոր օգտագործողի օրգանիզմի վրա ծանր հոգեներգործուն ազդեցություն թողնելու համար որպես կանոն բավարար նվազագույն չափը:».

3) 5-րդ և 6-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն օրենսգրքում նշված թունավոր նյութերի ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

6. Սույն օրենսգրքում նշված խիստ ներգործող նյութերի ցանկը, ինչպես նաև դրանց խոշոր չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 3.1-ին մասով ամրագրված չափորոշիչը:»:

**ՀՈԴՎԱԾ 4.** Ուժը կորցրած ճանաչել օրենսգրքի 1-5-րդ հավելվածները:

**ՀՈԴՎԱԾ 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ օրենքի 4-րդ հոդվածը՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի չափերը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը, մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի զգալի չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը սահմանող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ուժի մեջ մտնելու պահից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀՈԴՎԱԾ 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 44[1]-րդ հոդվածի՝

1) վերնագրում և տեքստում «հոգեմետ» բառից հետո լրացնել «(հոգեներգործուն)» բառը.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ՝ նոր խմբագրությամբ.

«3. Սույն գլխի իմաստով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափեր են համարվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի՝ զգալի չափերից պակաս չափերը:

**ՀՈԴՎԱԾ 2.** Օրենսգրքի 44[2]-րդ հոդվածի վերնագրում և տեքստում, ինչպես նաև 126-րդ, 158-րդ և 182[3]-րդ հոդվածների տեքստում «հոգեմետ» բառից հետո լրացնել «(հոգեներգործուն)» բառը:

**ՀՈԴՎԱԾ 3.** Օրենսգրքի 110[1]-րդ հոդվածի վերնագրում և տեքստում «թմրանյութեր» բառերը փոխարինել «թմրամիջոցներ» բառերով:

**ՀՈԴՎԱԾ 4.** Օրենսգրքի 110[2]-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ՝ նոր խմբագրությամբ.

«Մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը».

2) 1-ին և 2-րդ մասերում «Սույն օրենսգրքի 2-րդ հավելվածով նախատեսված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն)» բառերը փոխարինել «Մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր» բառերով.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ՝ նոր խմբագրությամբ.

«3. Սույն գլխի իմաստով մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի զգալի չափեր են համարվում անսովոր օգտագործողի օրգանիզմի վրա միջին հոգեներգործուն կամ միջին թունավոր ազդեցություն թողնելու համար որպես կանոն բավարար մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի նվազագույն չափերը:».

4) 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ և 5-րդ մասեր.

«4. Սույն գլխի իմաստով մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի մանր չափեր են համարվում սույն օրենսգրքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի զգալի չափերից պակաս չափերը:

5. Մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, ինչպես նաև դրանց զգալի չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 3-րդ մասում ամրագրված չափորոշիչը:».

**ՀՈԴՎԱԾ 5.** Օրենսգրքի 1-ին և 2-րդ հավելվածները ճանաչել ուժը կորցրած:

**ՀՈԴՎԱԾ 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ օրենքի 5-րդ հոդվածը՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի չափերը, մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, ինչպես նաև դրանց զգալի չափերը սահմանող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ուժի մեջ մտնելու պահից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

***«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ***

Ի կատարումն մշտապես գործող նախարարական պետահրավոկան կոմիտեի 2015 թվականի ապրիլի 2-ի նիստում տրված հանձնարարականի Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից նախապատրաստվել են «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր, որոնցով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, թունավոր նյութերի, խիստ ներգործող նյութերի, մշակումն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող համապատասխան հոդվածները և դրանք սահմանել ՀՀ կառավարության որոշմամբ:

Նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվել են շահագրգիռ պետական մարմինների հետ, ղրվել են հանրային քննարկումների, ուղարկվել են կարգավորման ազդեցության գնահատման և պետական-իրավական փորձաքննության:

Ստացված առաջարկությունների հիման վրա նախագծերը լրամշակվել են և ուղարկվել ՀՀ Նախագահի աշխատակազմ՝ կարծիքի:

ՀՀ Նախագահի աշխատակազմից 07.08.2015թ. ստացված եզրակացության համաձայն՝ նախագծերով նախատեսված կարգավորումները խնդրահարույց են ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 6-րդ կետի տեսանկյունից, համաձայն որի «Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ ... *քրեական, վարչական,* տնտեսական (գույքային), կարգապահական պատասխանատվության ենթարկելու *դեպքերը,* կարգը, *պայմանները,* քրեական պատիժների իրականացման կարգը, դատական և վարչական ակտերի հարկադիր կատարման կարգը, փաստաբանների կարգավիճակը և լիազորությունները»:

Համաձայն եզրակացության՝ թմրամիջոցների և այլ նյութերի (զգալի, խոշոր և առանձնապես խոշոր) չափերը հանդիսանում են քրեական պատասխանատվության պարտադիր պայմաններից մեկը, քանի որ այդ հանցագործությունների պարագայում թմրամիջոցների և այլ նյութերի չափերով է պայմանավորված, թե անձը կենթարկվի քրեական, վարչական պատասխանատվության, թե ընդհանրապես որևէ պատասխանատվության չի ենթարկվի:

Որպես խնդրի լուծում ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից առաջարկվել է օրենքում սահմանել թմրամիջոցների (և այլ նյութերի) չափերին վերաբերող չտփանիշներ, որոնցով պայմանավորված կլինի այն հանգամանքը, թե կոնկրետ անանձի թմրամիջոցի (և այլ նյութի) կոնկրետ չափաքանակը մանր է, թե՝ զգալի, խոշոր կամ առանձնապես խոշոր: Այդ չափանիշներից ելնելով՝ ՀՀ կառավարությունը կարող է արդեն սահմանել թմրամիջոցների (և այլ նյութերի) կոնկրետ չափաքանակները:

Նախագծերը ՀՀ Նախագահի աշխատակազմից ստացված առաջարկության համատեքստում լրամշակելու նպատակով ՀՀ ոստիկանությունում կազմակերպվել է աշխատանքային քննարկում ՀՀ ոստիկանության փորձաքրեագետների և ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ: Քննարկման արդյունքում որոշվել է օրենսգրքերում սահմանել թմրամիջոցների (և այլ նյութերի) չափերը որոշող չափորոշիչներ:

Մասնավորապես, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, խիստ ներգործող նյութերի, մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի կոնկրետ չափերը որոշելու համար չափորոշիչներ են հանդիսանալու անասնոր օգտագործողի օրգանիզմի վրա վերը թվարկված նյութերի թեթև, միջին, ծանր և առանձնապես ծանր հոգեներգործուն և թունավոր ազդեցության աստիճանները:

Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների կոնկրետ չափերը որոշելու համար չափորոշիչներ են հանդիսանալու դրանցով պատրաստվող թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերը:

***ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ***

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

*«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին*

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ այլ օրենքներ ընդունելու անհրաժեշտություն չկա:

*ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

*«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին*

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

*ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ*